Լրամշակված նախագիծ
երկրորդ ընթերցում

Կ-1171-17.10.2025-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10.1-ին հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի զ. ենթակետում «կարգը» բառից հետո լրացնել «, անցողիկ միավորը» բառերով.

Հոդված 2. Օրենքի 10.2-րդ հոդվածում.

1) 3-րդ մասի 3-րդ կետում «միավորների հաշվարկման կարգը» բառերից հետո լրացնել «, անցողիկ միավորը» բառերը,

2) 20-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20. Հաղթող է ճանաչվում հարցազրույցի փուլի համար նախատեսված անցողիկ միավորի շեմը հաղթահարած այն հավակնորդը, որը խորհրդի անդամների՝ մասնակիցներին տրված միավորների հանրագումարի արդյունքով ստացել է առավելագույն միավոր:»:

Հոդված 3. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5.1-ին կետով.

«5. 1) հանրային իշխանության մարմիններում, առողջապահության, սոցիալական, շրջակա միջավայրի պահպանության, փորձագիտության, կառուցապատման կամ ներդրումային ծրագրերի ապահովման բնագավառներում գործունեություն իրականացնող կամ վերջին երեք տարվա ընթացքում պետական բյուջեից սուբսիդիաներ կամ դրամաշնորհներ ստացած պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, պետության կողմից հիմնադրված հիմնադրամներում, հիսուն տոկոս և ավելի պետական կամ համայնքի կամ

պետական ու համայնքի բաժնեմասեր (հանրագումարով) ունեցող ընկերություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման միասնականությունն ապահովելը, իրավասու մարմիններ առաջարկություններ ներկայացնելը. »:

Հոդված 4. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 12.1-ին, 12.2-րդ և 12.3-րդ կետերով.

«12.1) մշակում և հաստատում է սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետով նախատեսված մարմիններում և կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը, որը ներառում է կոռուպցիոն ռիսկերի գնահատման շրջանակը, չափորոշիչները, գործիքակազմը, հրապարակում է գնահատման արդյունքները, մարմինների և կազմակերպությունների առաջարկով՝ նաև վերջիններիս կողմից ներկայացված կարծիքները.

12.2) սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետով նախատեսված մարմիններից և կազմակերպություններից պահանջում և ստանում է գնահատման գործընթացին առնչվող տեղեկություններ և փաստաթղթեր, իրականացնում է գնահատում.

12.3) կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքներով արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում իրավասու մարմիններ, տրամադրում մասնագիտական խորհրդատվություն.»:

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-ին կետով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

3. Սույն օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 12.2-րդ և 12.3-րդ կետերով սահմանված կարգավորումները գործելու են սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
««ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Կոռուպցիոն ռիսկերը հաճախ արդյունք են ինստիտուցիոնալ խոցելիության, որոնք նպաստում են կոռուպցիոն վարքագծի ձևավորմանն ու նվազեցնում կառավարման արդյունավետությունը: Հետևաբար, այդ ռիսկերի գնահատումը և նվազեցումը պահանջում են համապարփակ և համակարգային մոտեցում, որն ուղղված է կառավարման թափանցիկության, արդյունավետության և հաշվետվողականության բարձրացմանը:

Կոռուպցիոն ռիսկերի արդյունավետ գնահատումը խթանում է ոչ միայն պետական կառավարման օպտիմալացումը, այլև նպաստում է հասարակական վստահության ամրապնդմանը: Այն ուղղված է այնպիսի կառավարման համակարգի ձևավորմանը, որը զերծ է կոռուպցիոն ռիսկերից և արդյունավետ կերպով ծառայում է հանրային շահերին:

Կառավարման թափանցիկության, հրապարակայնության, օրինականության և հաշվետվողականության մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ է իրականացնել կոռուպցիոն ռիսկերի համապարփակ բացահայտում, վերլուծություն և գնահատում՝ հիմքում դնելով միասնական մեթոդաբանություն: Կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը պետք է լինի հստակ և կիրառելի՝ ապահովելով կանխարգելման քաղաքականության կայուն հիմք:

ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի շրջանակում կոռուպցիոն ռիսկերի գնահատումը դիտարկվում է որպես առանցքային մեխանիզմ՝ ուղղված պետական պաշտոնյաների գործառույթներում առկա ռիսկերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը, պետական ֆինանսների կառավարման թափանցիկության ապահովմանը, պետական համակարգում կոռուպցիոն սպառնալիքների վերաբերյալ պարբերական հաշվետվությունների պատրաստմանն ու հրապարակմանը, ինչպես նաև մասնավոր հատվածում թափանցիկության խրախուսմանը և կարգավորող գործընթացների չարաշահումների կանխարգելմանը:

Հանրային և մասնավոր հատվածներում կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրման անհրաժեշտությունը հիմնավորված է ինչպես Հայաստանի

Հանրապետությունում իրականացվող ինստիտուցիոնալ բարեփոխումներով, այնպես էլ միջազգային հարթակում երկրի ստանձնած պարտավորություններով և հանձնառություններով՝ ուղղված բարեվարքության ամրապնդմանը և կոռուպցիայի կանխարգելմանը:

«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամի կողմից 2022 թվականին հրապարակված՝ «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն» զեկույցն, անդրադառնալով ծառայությունների և ոլորտների կոռումպացվածությանը, նշում է, որ հարցվածների մոտ 55%-ը կոռուպցիան տարածված է համարել առողջապահության ոլորտում: Կոռումպացված լինելու տեսանկյունից, ըստ քաղաքացիների, երկրորդ տեղում է լրատվությունը (22,6%), ապա ընտրական գործընթացները (21,4%) (ընտրական հանձնաժողովներ, ընտրացուցակներ, քվեաթերթիկների հաշվարկ և այլն):

Համաշխարհային բանկի աջակցությամբ հանրային ծառայողների շրջանում իրականացված հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հանրային ծառայողների դիտարկմամբ կոռուպցիոն ռիսկերին առավել հակված գործառույթներն են պետական գնումները, վերահսկողությունը և ֆինանսական կառավարումը:

Այս դիտարկումները վկայում են տարբեր ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ ընկալումների առկայությունը, ինչը կարևոր հիմք է կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի անհրաժեշտությունը արձանագրելու տեսանկյունից:

Կոռուպցիոն ռիսկերի գնահատման անհրաժեշտությունն արտահայտված է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում: Մասնավորապես, Արդարադատության նախարարության կողմից կատարման ենթակա միջոցառումների 16-րդ կետի 16.2-րդ ենթակետով նախատեսվում է կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա ոլորտային հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերի մշակում՝ շահագրգիռ մարմինների, միջազգային գործընկերների և քաղաքացիական հասարակության մասնակցությամբ:

Կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրման անհրաժեշտությունն ընդգծվում է նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ հաստատված ՀՀ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ, որը

վարչական կոռուպցիայի հաղթահարման, հանրային կառավարման մարմիններում և ոլորտներում թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության բարձրացման, օրինականության ապահովման, կոռուպցիոն ռիսկերի ու ռիսկեր ծնող գործոնների չեզոքացման համար առանցքային է համարել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, համայնքապետարանների աշխատակազմերում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգի ներդրումը՝ հիմնված միջազգայնորեն ընդունելի չափանիշների և կառուցակարգերի, միջազգային հակակոռուպցիոն կազմակերպությունների կողմից տրված առաջարկությունների վրա: «Գործարար ոլորտում բարեվարքության ամրապնդում» ռազմավարական ուղղության ներքո նշվում է, որ միջազգային կազմակերպությունների կողմից մշտապես բարձրաձայնվել է նաև պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրման անհրաժեշտությունը:

ՀՀ միջազգային պարտավորությունների տեսանկյունից հարկ է նշել, որ միջազգային կազմակերպությունների կողմից մշտապես բարձրաձայնվել է պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրման անհրաժեշտությունը: Այսպես, ՏՀԶԿ ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի՝ Հայաստանի գնահատման զեկույցը Հայաստանում գործարար բարեվարքության համար կատարողականի մակարդակը գնահատել է ցածր՝ անդրադառնալով նաև պետական մասնակցությամբ 5 խոշոր ընկերություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատմանը, կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործընթացում տնօրենների խորհրդի դերի սահմանման անհրաժեշտությանը: Զեկույցի 4.4.3-րդ հենանիշի տարրերը, որոնցով նախատեսվում է ՀՀ պետական մասնակցությամբ 5 խոշորագույն ընկերություններում համապատասխանության ծրագրի ներդրում և կոռուպցիան ընդգրկող ռիսկերի գնահատում, գնահատվել են «ոչ համապատասխան» պետական մասնակցությամբ բոլոր 5 ընկերությունների դեպքում: Զեկույցն արձանագրում է, պետական մասնակցությամբ ընկերություններում հակակոռուպցիոն համապատասխանության կայուն համակարգերի ձևավորումը, ինչպես նաև կորպորատիվ կառավարման զարգացումը՝ միջազգային չափանիշներին համապատասխան, պետք է ընդգրկվեն Հայաստանի կառավարության հակակոռուպցիոն քաղաքականության առանցքային ուղղությունների մեջ:

Կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրումը ներառված է նաև Ասիական զարգացման բանկի և Զարգացման ֆրանսիական գործակալության հետ համատեղ իրականացվող բյուջետային աջակցության վարկային ծրագրի 3-րդ ենթածրագրի շրջանակում: Ըստ ենթածրագրի 3.6-րդ գործողության «v» կետի՝ Կառավարությունը Ազգային ժողովին կներկայացնի համապատասխան օրենքի նախագիծ, որով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին կվերապահվի պետական մասնակցությամբ ընկերություններում, պետական ոչ առևտրային կազմակերպություններում և այլ կառույցներում կոռուպցիոն ռիսկերի գնահատման, ինչպես նաև հակակոռուպցիոն միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու լիազորությունը:

2. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիր.

Նախագծի ընդունումը բխում է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի՝ Արդարադատության նախարարության կողմից կատարման ենթակա միջոցառումների 16-րդ կետի 16.2-րդ ենթակետի, «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ հաստատված գործողությունների ծրագրի 2-րդ հավելվածի 1.9-րդ և 4.3-րդ գործողությունների պահանջներից:

3. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

2023 թվականին կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրման ուղղությամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) աշխատանքները կենտրոնացել են միասնական մեթոդաբանության մշակման վրա: Մշակված մոտեցումները նպատակ ունեն ապահովել կոռուպցիոն ռիսկերի համակարգված

վերլուծության և գնահատման համար անհրաժեշտ գործնական ու հստակ հիմքեր՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա:

2024 թվականին, մեթոդաբանության կիրառելիությունը փորձարկելու նպատակով, իրականացվել են փորձնական (պիլոտային) գնահատումներ: Հանձնաժողովը գնահատումներ է իրականացրել երեք կազմակերպություններում՝ «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» (ԱՆԻՖ) ՓԲԸ, «Հայանտառ» ՊՈԱԿ, «Երևանի թիվ 119 մանկապարտեզ» ՀՈԱԿ, ինչպես նաև պետական կառավարման մեկ ոլորտում:

Գնահատումների արդյունքում արձանագրվել է անհրաժեշտություն՝ վերոնշյալ կազմակերպություններում զարգացնելու բարեվարքության և հակակոռուպցիոն համապատասխանության կարողությունները՝ համաձայն միջազգային ստանդարտների: Միաժամանակ, վեր են հանվել խնդիրներ, որոնք պահանջում են համակարգային լուծումներ: Արձանագրած խնդիրներն ու բացերն ամփոփված են զեկույցում, որում անդրադարձ է կատարվել ինչպես առկա մարտահրավերներին, այնպես էլ միջազգային ստանդարտներին[1]:

Նույն տարում, համագործակցելով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ, Հանձնաժողովը իրականացրել է պիլոտային գնահատում անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգում: Գնահատման նպատակն էր բացահայտել ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը, այդ թվում՝ իրավական բացերը, կանոնակարգման պակասը, ոչ արդյունավետ պրակտիկաներն ու կոռուպցիոն ընկալումները: Վերլուծվել են նաև ռիսկերի խորքային պատճառներն ու կառուցակարգային գործոնները՝ նպատակ ունենալով զսպել համակարգի կայունությանը սպառնացող ռիսկերն ու բարձրացնել համակարգի արդյունավետությունը:

Գնահատման արդյունքներն ամփոփվել են զեկույցում և ոլորտային հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրում[2]:

Հանձնաժողովը պարբերաբար կազմակերպում է նաև վերապատրաստման դասընթացներ և հանրային իրազեկման միջոցառումներ՝ կոռուպցիոն ռիսկերի գնահատման կարողությունները խորացնելու նպատակով:

Այնուամենայնիվ, թեև նշված նախաձեռնությունները կարևոր առաջընթաց են, ներկայումս օրենսդրական կարգավորումների բացը խոչընդոտում է Հանձնաժողովի լիարժեք

---

[1] Պետական մասնակցությամբ ընկերություններում և պետական (համայնքային) ոչ առևտրային կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի փորձնական գնահատման արդյունքներ, Երևան, 2024, https://bit.ly/3ENL5pz

[2] Հայաստանում անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգում կոռուպցիոն ռիսկերի գնահատում, Երևան, 2025, https://bit.ly/4cg48Ws

գործառույթների իրականացմանը: Կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործիքակազմի իրավական ամրագրումը անհրաժեշտ պայման է՝ կանխարգելման մանդատի արդյունավետ իրագործման և համակարգային մոտեցմամբ հակակոռուպցիոն ջանքերի ամրապնդման համար:

4. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծով առաջարկվում է ներդնել կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգ հետևյալ մարմիններում և կազմակերպություններում.

1. Հանրային իշխանության մարմիններ.

2. Առողջապահության, սոցիալական, շրջակա միջավայրի պահպանության, փորձագիտության, կառուցապատման կամ ներդրումային ծրագրերի ապահովման բնագավառներում գործունեություն իրականացնող կամ վերջին երեք տարվա ընթացքում պետական բյուջեից սուբսիդիաներ կամ դրամաշնորհներ ստացած պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ.

3. Պետության կողմից հիմնադրված հիմնադրամներ.

4. Հիսուն տոկոս և ավելի պետական կամ համայնքի կամ պետական ու համայնքի բաժնեմասեր (հանրագումարով) ունեցող ընկերություններ:

Կոռուպցիոն ռիսկերի գնահատման նպատակով Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի սահմանում է գնահատման ենթակա գործընթացը՝ հիմնվելով մեթոդաբանությամբ սահմանված ռիսկային չափորոշիչների վրա: Դա Հանձնաժողովին հնարավորություն է կտա առաջնահերթություն տալ այն գործընթացներին, որոնք օբյեկտիվորեն առավել խոցելի են կոռուպցիոն ռիսկերի նկատմամբ և իրականացնել դրանց խորքային վերլուծություն:

Գնահատման շրջանակում Հանձնաժողովը կկենտրոնանա կառավարման արդյունավետության, այդ թվում՝ վարչարարության պարզեցման, հայեցողական որոշումների սահմանափակման, թափանցիկության, հաշվետվողականության, բարեվարքության ամրապնդման և այլ գործոնների վրա:

Գնահատման արդյունավետության ապահովման նպատակով Հանձնաժողովը կարող է մարմիններից և կազմակերպություններից պահանջել և ստանալ գնահատման գործընթացին առնչվող անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր:

Գնահատման արդյունքների համադրելիության և մեթոդաբանական ճշգրտության ապահովման նպատակով Հանձնաժողովը պետական և տեղական ինքնակառավարման

մարմիններին և կազմակերպություններին կտրամադրի մասնագիտական խորհրդատվություն՝ նպաստելով համակարգի կայուն ներդրմանը, գնահատման որակի բարելավմանը և արդյունքների հետևողական կիրառմանը:

Այսպիսով, համակարգի ներդրումը կապահովի ոչ միայն առկա հակակոռուպցիոն և կառավարման մեխանիզմների բազմակողմանի գնահատում, այլև կնպաստի բարեփոխումների իրականացմանը և կոռուպցիոն ռիսկերի արդյունավետ կառավարմանը պետական և համայնքային մարմիններում ու կազմակերպություններում:

Միաժամանակ, նախագծով առաջարկվում է հստակեցնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր տեղի համալրման նպատակով անցկացվող մրցութային գործընթացի առկա կառուցակարգերը: Մասնավորապես՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքի 10.1-ին և 10.2-րդ հոդվածներում իրականացվող փոփոխություններով առաջարկվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուի ընտրության համար ձևավորվող մրցութային խորհրդին լիազորել՝ հարցազրույցի փուլում սահմանելու անցողիկ միավորների շեմը: Սա հնարավորություն կընձեռնի մրցութային խորհրդին՝ առավել որոշակի դարձնել հարցազրույցի փուլի չափանիշները:

5. Պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների վերաբերյալ.

Նախագծի ընդունման պարագայում լրացուցիչ ֆինանսական միջոցների հատկացման, ինչպես նաև պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանա:

6. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից:

7. Ակնկալվող արդյունքները.

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ապահովել միասնական կառուցակարգերի և մեթոդաբանության հիման վրա կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին համապատասխան գործառույթների և լիազորությունների վերապահման միջոցով:

Լրամշակված նախագիծ
երկրորդ ընթերցում

Կ-1171-17.10.2025-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10.1-ին հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի գ. ենթակետում «կարգը» բառից հետո լրացնել «, անցողիկ միավորը» բառերով.

Հոդված 2. Օրենքի 10.2-րդ հոդվածում.

1) 3-րդ մասի 3-րդ կետում «միավորների հաշվարկման կարգը» բառերից հետո լրացնել «, անցողիկ միավորը» բառերը,

2) 20-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20. Հաղթող է ճանաչվում հարցազրույցի փուլի համար նախատեսված անցողիկ միավորի շեմը հաղթահարած այն հավակնորդը, որը խորհրդի անդամների՝ մասնակիցներին տրված միավորների հանրագումարի արդյունքով ստացել է առավելագույն միավոր:»:

Հոդված ~~1~~3. «~~Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝~~ Օրենք~~ի)~~ 23-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5.1-ին կետով.

«5.1) հանրային իշխանության մարմիններում, առողջապահության, սոցիալական, շրջակա միջավայրի պահպանության, փորձագիտության, կառուցապատման կամ ներդրումային ծրագրերի ապահովման բնագավառներում գործունեություն իրականացնող կամ վերջին երեք տարվա ընթացքում պետական բյուջեից սուբսիդիաներ կամ դրամաշնորհներ ստացած պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, պետության կողմից

հիմնադրված հիմնադրամներում, հիսուն տոկոս և ավելի պետական կամ համայնքի կամ պետական ու համայնքի բաժնեմասեր (հանրագումարով) ունեցող ընկերություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման միասնականությունն ապահովելը, իրավասու մարմիններ առաջարկություններ ներկայացնելը. »:

Հոդված 4~~2~~. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 12.1-ին, 12.2-րդ և 12.3-րդ կետերով.

«12.1) մշակում և հաստատում է սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետով նախատեսված մարմիններում և կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը, որը ներառում է կոռուպցիոն ռիսկերի գնահատման շրջանակը, չափորոշիչները, գործիքակազմը, հրապարակում է գնահատման արդյունքները, մարմինների և կազմակերպությունների առաջարկով՝ նաև վերջիններիս կողմից ներկայացված կարծիքները.

12.2) սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետով նախատեսված մարմիններից և կազմակերպություններից պահանջում և ստանում է գնահատման գործընթացին առնչվող տեղեկություններ և փաստաթղթեր, իրականացնում է գնահատում.

12.3) կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքներով արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում իրավասու մարմիններ, տրամադրում մասնագիտական խորհրդատվություն.»:

Հոդված 5~~3~~.

4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

5. Սույն օրենքի 4~~2~~-րդ հոդվածով նախատեսված Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-ին կետով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ~~ենթաօրենսդրական ակտն~~ ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

6. Սույն օրենքի 4~~2~~-րդ հոդվածով նախատեսված Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 12.2-րդ և 12.3-րդ կետերով սահմանված կարգավորումները գործելու են սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ~~ենթաօրենսդրական իրավական ակտն~~ ուժի մեջ մտնելու պահից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1171-17.10.2025-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 12.1-ին կետի համաձայն. «12.1) մշակում և հաստատում է սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետով նախատեսված մարմիններում և կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը, որը ներառում է կոռուպցիոն ռիսկերի գնահատման շրջանակը, չափորոշիչները, գործիքակազմը, հրապարակում է գնահատման արդյունքները, մարմինների առաջարկով՝ նաև վերջիններիս	**Ընդունվել է** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			կողմից ներկայացված կարծիքները.»: Հարկ է նկատել, որ Հանձնաժողովը հրապարակում է ինչպես հանրային իշխանության մարմիններում, այնպես էլ որոշ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքները: Մինչդեռ մեջբերված դրույթով Հանձնաժողովին լիազորություն է վերապահվում հրապարակել միայն մարմինների կողմից ներկայացված կարծիքները՝ վերջիններիս առաջարկով: Ուստի առաջարկում ենք Նախագծի մեջբերված դրույթում «մարմինների» բառից հետո լրացնել «և կազմակերպությունների» բառերը՝ այդպիսով ապահովելով նաև կազմակերպությունների կողմից ներկայացված կարծիքների հրապարակայնությունը:		

2.	ՀՀ կառավարություն	««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «ենթաօրենսդրական ակտն» բառերը, իսկ նույն հոդվածի 3-րդ մասում «ենթաօրենսդրական իրավական ակտն» բառերն առաջարկում ենք փոխարինել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված հասկացությունը, ինչպես նաև նույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված պահանջը, որի համաձայն. «Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ:»:	**Ընդունվել է** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
3.	Ազգային ժողովի պատգամավոր Ա. Ջուլհակյան	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենք, 10.1-ին հոդված, 1-ին մաս	Առաջարկվում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի զ. ենթակետում «կարգը» բառից հետո լրացնել «անցողիկ միավորը» բառերը:	**Ընդունվել է** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

4.	Ազգային ժողովի պատգամավոր Ա. Ջուլհակյան	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենք, 10.2-րդ հոդված, 3-րդ և 20-րդ մասեր	Առաջարկվում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.2-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում «միավորների հաշվարկման կարգը» բառերից հետո լրացնել «անցողիկ միավորը» բառերը, իսկ 20-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «20. Հաղթող է ճանաչվում հարցազրույցի փուլի համար նախատեսված անցողիկ միավորի շեմը հաղթահարած այն հավակնորդը, որը խորհրդի անդամների՝ մասնակիցներին տրված միավորների հանրագումարի արդյունքով ստացել է առավելագույն միավոր:»	**Ընդունվել է** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
5.	Ազգային ժողովի պատգամավոր Ա. Ջուլհակյան	««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-ին և 10.2-րդ հոդվածներում նախատեսվող փոփոխությունների հաշվառմամբ վերանայել նախագծի հիմնավորումը:	**Ընդունվել է** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

6.	Ազգային ժողովի պատգամավոր Ա. Ջուլհակյան	««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Իրականացված փոփոխությունների հաշվառմամբ առաջարկվում է նախագծի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ **««ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»:**	**Ընդունվել է** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**